ԲԱՅՑ ԱՍՏՎԱԾ ԽՈՍՏԱՑԱՎ

BUT GOD PROMISED

ԳՈՐԾՔ 7:5
ACTS 7:5

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ.

1 Քահանայապետն ասաց Ստեփանոսին. «Իսկապէս դա այդպէ՞ս է»։ 2 Եւ նա ասաց.
«Եղբայրե՛ր եւ հայրե՛ր, լսեցէ՛ք ինձ. փառքի Աստուածը երեւաց մեր հօրը՝
Աբրահամին, մինչ նա դեռ Միջագետքում էր, եւ նրան Խառանում դեռ չէր բնակեցրել,
ու ասաց նրան. 3 «Դո՛ւրս ել քո երկրից եւ քո տոհմից ու արի՛ այն երկիրը, որ քեզ ցույց
կը տամ»։ 4 Այն ժամանակ Աբրահամը ելնելով քաղդէացիների երկրից՝ բնակուեց
Խառանում. եւ նրա հօր մահից հետո այնտեղից Աստուած փոխադրեց պանդխտեցրեց
նրան այս երկիրը, ուր դուք այժմ բնակվում էք։ 5 Այստեղ նրան եւ ոչ մի
ժառանգություն չտվեց, ոչ իսկ մի ոտնաչափ տեղ, **բայց խոստացավ** նրան այս տեղը
տալ բնակության համար եւ իրենից հետո՝ նրա սերնդին, երբ դեռ նա որդի չունէր։
6 **Աստուած այսպէս խօսեց.** «**Նրա սերունդը օտար երկրում պանդուխտ պիտի
լինի, եւ նրան ծառա պիտի դարձնեն ու չորս հարյուր տարի պիտի չարչարեն։**
7 **Եւ այն ազգին,** որին նրանք ծառա պիտի դառնան, ես պիտի դատեմ, - ասում է
Աստուած, եւ սրանից հետո պիտի ելնեն ու պիտի պաշտեն ինձ այս տեղում»։ 8 Եւ
նրան թլփատության ուխտ տուեց, ու ապա նա ծնեց Իսահակին եւ թլփատեց նրան
ութերորդ օրը. եւ Իսահակը՝ Հակոբին, Հակոբն էլ՝ տասներկու նահապետներին։ 9 Եւ
նահապետները Հովսէփին նախանձելով, նրան վաճառեցին, որ Եգիպտոս տարուի.
բայց Աստուած նրա հետ էր։

> **Ել. 12:40-41, 43 -** 40 Եւ Եգիպտոսի մէջ Իսրայէլի որդիների բնակուած ժամանակը
> չորս հարյուր երեսուն տարի էր։ 41 Եւ եղավ որ չորս հարյուր երեսուն տարուա
> վերջին՝ հէնց նույն օրը Եհովայի բոլոր զօրքերը Եգիպտոսի երկրից ելան։ 43 Եւ
> Եհովան ասեց Մովսէսին եւ Ահարոնին. Այս է զատկի կանոնը…

Աբրահամ, Իսահակ, Հակոբ, Հովսեփ

Ղեվի, Կահաթ, Ամրամ, Մովսես

I. ԱՍՏԾՈ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ ԱՆՓՈՓՈԽ ԵՆ:
GOD'S PROMISES ARE UNCHANGEABLE

Սաղ. 145:4 - 4 Ազգ ազգի կգովէ քո գործերը. եւ կպատմեն քո զօրութիւնները։

Սաղ. 78:3-4 - 3 Այն որ լսեցինք ու ճանաչեցինք, եւ **մեր** հայրերը պատմեցին **մեզ**։ 4 Մենք նորանց չենք թաքցնում **որդիներից**. եկող սերնդին պատմեցինք օրհնությունն ու զօրությունը Տիրոջ եւ այն հրաշքները, որ նա արեց։

II. ԱՍՏԾՈ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ ԱՅՈ ԵՎ ԱՄԵՆ ԵՆ:
GOD'S PROMISES ARE YES AND AMEN.

2 Կոր. 1:20 - 20 որովհետեւ Աստծու այնչա՛փ խոստումները այո եղան Նրա մէջ. դրա համար էլ Նրանով է, որ ասում ենք ԱՄԷՆ՝ Աստծու փառքի համար։

1 Կոր. 15:19 - 19 Եթէ միայն այս կեանքումս ունինք հույս Քրիստոսի վրա, ամեն մարդկանցից ավելի ողորմելի ենք։

Ղեվի, Կահաթ, Ամրամ, Մովսես

Եփ. 1:11 - 11 Քրիստոսով ստացանք ժառանգություն մենք առաջուց որոշուած լինելով, նորա հառաջադրության պէս, որ ամեն բան հաջողում է իր կամքի խորհուրդների պէս.

> **Եբր. 10:35-37 - 35** Ուրեմն դէն մի գցէք ձեր վստահութիւնը, որ մեծ վարձքի հատուցումն ունի։ 36 Որովհետեւ համբերություն է պէտք ձեզ, որ Աստուծո կամքն անելով խոստմունքն ստանաք։ 37 Որովհետեւ միայն մի քիչ ժամանակ էլ, եւ նա որ գալու է՝ կգա եւ չի ուշանա։

Իսկ ո՞րն է Նրան Խոստմունքը։

Եփ. 1:13-14 - 13 Որ նորանում եւ դուք հուսացաք, երբոր ճշմարտության խօսքը լսեցիք՝ ձեր փրկության ավետարանը, որին էլ երբոր հավատացիք՝ **խոստումի Սուրբ Հոգով կնքվեցիք։** 14 Որ մեր ժառանգության գրաւն է, մինչեւ ստացուածքի փրկությունը, նորա փառաց գովասանքի համար։

1 Պետ. 1:23 - 23 Վերստին ծնված լինելով ոչ թէ ապականության սերմից այլ անապական սերմից. Աստուծո կենդանի եւ հավիտենական խօսքով